Սեմինար փոխերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման (ՓԼ/ԱՖ) դեմ պայքարի ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջների մասին թեմայով

19.11.2012 09:37

Հարգելի փաստաբաններ,

Հայտնում ենք Ձեզ, որ ս.թ. նոյեմբերի 20-ին, ժամը 14:00-ից 17.30-ը ՀՀ կենտրոնական բանկի շենքում ՀՀ ԿԲ ֆինանսական դիտարկումների կենտրոնը Արժույթի միջազգային հիմնադրամի հետ համատեղ նախատեսում է կազմակերպել սեմինար՝ փաստաբանների, նոտարների, հաշվապահների, աուդիտորների և ռիելտորների համար:

Սեմինարի նպատակն է ներկայացնել նշված հաշվետու անձանց նկատմամբ փոխերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման (ՓԼ/ԱՖ) դեմ պայքարի ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջները, ոլորտը կարգավորող միջազգային նոր չափանիշները, ինչպես նաև ՓԼ/ԱՖ ազդակները և ոլորտում առկա հնարավոր ռիսկերը:

Սեմինարը վարելու են ՀՀ կենտրոնական բանկի ֆինանսական դիտարկումների կենտրոնի և Արժույթի միջազգային հիմնադրամի մասնագետները:

Սեմինարին մասնակցելու համար խնդրում ենք <u>ՇՏԱՊ ԱՐՁԱԳԱՆՔԵԼ</u> այն փաստաբաններին, որոնք հետաքրքրված են վերը հիշատակված թեմայով: Սեմինարին մասնակցելու են 5 փաստաբան:

Մասնակցելով վերապատրաստմանը՝ յուրաքանչյուր փաստաբան հնարավորություն կստանա օգտվել 2 ժամյա վերապատրաստումից:

Լրացուցիչ տեղեկությունների և դասընթացին գրանցվելու համար խնդրում ենք զանգահարել ՀՀ փաստաբանների պալատ հետևյալ հեռախոսահամարներով՝ 56-57-92 + 115 և կամ պատասխան նամակ ուղարկել arman_poghosian@yahoo.com էլ. հասցեին:

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })